


Ա Ւ Ո Շ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԵՐԿՐՈՒ, ԲԵԼՈՎԵՐԴ, ԳԵՂԻՑԵՐ
ԵՒ ՔԵՐԵՐԵՐ

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ


ՀՅԱՆ ՄԵԾՈՒՅՈ



ՃԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԵՐԱՆԻ ՄՐԵՈՑ ԶԱԿՈՎԵՐԵԱՆՑ

1873



A horizontal row of four ornate, Gothic-style letters. From left to right: a 'W' with internal scrollwork and a small cross; a 'T' with a central vertical bar and decorative ends; an 'O' with a cross-like pattern inside; and a 'G' with a large, sweeping flourish at the top.

ԱՐԵՎԱՏՅԱՆԻ ՏԱՐԱԾ
ԹԻՒ 4.

ԱՐՄԱԿԻՐ

ԱՊՐԻԼ. 30
1873.

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն. , Բ.Ա.Ն.Ա.Մ.Ի.Բ.Ա.Կ.Ա.Ն. ԵՒ Գ.Բ.Ա.Գ.Ի.Ց.Ա.Կ.Ա.Ն.

ՕՐԴԻՔ ԱՎՏՈՒՅՑ

ԽՈՍՔ ԵՐԿՐՈՆԻ (•)

և Տեսէք արզիսի մեր շնորհեաց մեզ կայսր՝ զի որ-
դիք Առառնեց կոչեցաւք և մըք վասն այսպիսի
աշխարհ ոչ ճանաչէ զմեղ՝ բանզի ոչ ծանեաւ զնաւ։
Այսինքն՝ այժմ պրիմ Առառնեց եմք, և չեւ եւս է
յայս՝ ենթէ զինչ լինեալց իցեմք՝ գիտեամք՝ զի յար-
ժամ նաև յայտնեցին՝ նեան նեան լինեալց եմք, զի
տեսանեալց եմք զնաւ որպէս և են։ Եւ ամենայն որ-
ունի զայս յայս յահանին՝ որք զնանձն իւր՝ որպէս
և եայն ուորք է ս։ Ա։ Յահանին Գ։ 1—5։

“ Այս արդիք Կատուծոյ եմք և
կ'ասէ առաքեալն , այսինքն այս մեք
էապէս այն եմք , ինչ որ պարտաւոր
եմք լինիլ . Ծ.Շ. երկրիա վըսց և ԾԷ
յերկինս մեք կարող եմք միայն որդիք

^(*) *Cum non habemus β h. v. c. velut β f. n. s.*

Վասուծոյ լինիլ և ոչ այլ ինչ, որ առ
ռաւը և լիցէ քան զրդիս Վասուծոյ։
Իբրև որդիք Վասուծոյ մեր կը կենք
արդէն մեր յաւիտենական որդեւ-
գրութեան գրաւականներն ու զգա-
ցութիւնն և մեր կեանքն, իւր սկզբա-

բունքներով և հանուր ու զղութեամբ,
արդէն կեանք է երկնային :

Ոակայն, եղբարք իմ, եթէ մեր
ճակատագիրն բարցածակապէս կըն-
քուած աւարտուած լինէր մեր նկա-
րագրած բարցական վիճակին համե-
մատ, երկու առարկութիւնք ան
շուշտ մեր առջեւն պիտի ենէին,
զօրս կը նախատեսէք դուք արդէն ա-
ռանց գժուարութեան : Վաաջինն,
որ սոյնպիսի փրկութեան մէջ բաւա-
կանին երջանկութիւն պիտի չը լինէր.
վասն զի պիտի չը լինէր նաեւ բաւա-
կանին սրբութիւն . ըստ որում մեր
գիտեմք արդէն, որ երջանկութիւնն
սրբութեան չափավէտ, երջանկութիւ-
նըն ոչ այլ ինչէ, եթէ ոչ սրբութիւն:
Եւ ինչ որ կը պակսի սրբութեան,
այն է հնազանդութեան և սիրոյ, նոյ-
նըն կը պակսի նաեւ երջանկութեան,
նոյնն կը նուազի նաեւ փրկութեան :
Ես կը խոստովանիմ կանխաւ, որ փր-
կութիւնն մեզմէն արտաքոյ է, մեր
բարցական վերանորոգութենին ա-
ռաջ, անկախ մեր գործքերէն, և ա-
մենեւին չափայ և աստիճանի տուկ
չամփոփիր : Ոարդ կամ փրկուած է
կամոչ : Բաց, նա միայն, ով որ զին-
քըն կը ճանաչէ փրկեալ, փրկեալ չը-
նորհօք, փրկեալ վերասփին ՚ի մեղս չը
դառնալու պայմանաւ, իսկապէս այն-
պիսին միայն կարօտութիւն կըդայ
կատարելագործութեան, որ է ծա-
րաւ կամ փափաք երջանկութեան :
Եւ որովհեաեւ, որչափ կը ջանայ, կը
յառաջադիմէ, այնչափ եւս իւր նը-
պատահէն հեռի կը տեսնէ զինքն, և
մի կողմէն արտաքին պարագաներն ու
մարմնոյ կապերն, և միւս կողմէն կը-
նաց վկուերն ու բնական յօժարու-
թեանց մաքաւումներն գերբնական
յօժարութեանց հետ, միշտ մըու-
թեան և անմաքրութեան սուռելներ

կը ձգեն նորա հոգւցին վերայ և երբ
կը տեսնէ թէ ապագայն բան մի պիտի
չը յաւելու ներկային վերայ, ակամայ
կամօք կ'ըստիպուի հարցնել նկնին,
— Վայ է արդեօք երկինքն, այս է ար-
դեօք փրկութիւնն, այս է արդեօք
Կատուծոյ որգւց բաժինն :

Այն կէտն կ'առաջնորդէ մեղա-
հա գէս ՚ի երկրորդ առարկութիւնն :

Ոարդէն, որչափ ժամանակ որ մարդ
է, ինչպէս որ պիտի մնիյաւեան,
միշտ պիտի կորոտի ապագայի և միշտ
պիտի ապրի յուսով : Ը արժումն,
յառաջադիմութիւնն յատուկ և է-
ական սեպհականութիւնք են մարդ-
կային բնութեան, և բոլոր արարշու-
թեան մէջ ամենայն արարած կը հա-
մազատախանէ սոյն կարօտութեան
և պիտոյից : Փիզիքական կամ բնուկան
աշխարհն անսպառելի կ'երեւի նաեւ բաւ-
րական աշխարհն : Կարող են մար-
դիկ միշտ յառաջել, աւելի լոււ ձա-
նաչել, աւելի լոււ գործել, աւելի
լոււ սիրել : Եւ այս մասին ուէտք է
յԱստուած ապաւինիլ և նովաւ պար-
ծիլ, որ կը հոգայ միշտ մեր գործու-
նեութեան համար եւ կ'ընդարձակէ
մեր էութեան կարողութիւնն անդր
բան զահման մտաց մերոց և բանից :
Վրդ՝ քանի որ յառաջելու և կատա-
րելագործուելու այսպիսի մեծ տա-
պարէզ կայ մեր առջեւ, մեր հոգւց
գործունեութեան թոիներն կը տը-
կարացնեմք, եթէ բարցարձակ իմաս-
տով առնումք առաքելցն սոյն խօսքն,
« Վայ որդիք Կատուծոյ եմք » :

Որպէս զի բարցարձակ իմաստիւ չը
նկատենք, առաքեալն խկոյն կը յա-
ւելու, մեր նոր խնդիր յարուցանելու
և գանգատելու առաջն առնլոց համար,
հետեւալ խօսքն, « Եւ ևս է յայտ՝
թէ զինչ լինելոց իցեմքը որովէ և նոր ու

արիչ ձեւ կը տոսյ Ա. Պօղոսի սոյն խօսքին, և Յաւսով եմք փրկեալը ո այն է՝ մեր ունիքը արդէն կատարեալ վասահաւթիւնի բայց ոչ կատարեալ վայելու մնարժանիութեան։ Ուրեմն քանի մի կետեր կան, որ բացատրութեան եւ յայտնութեան կարու են։ Վատուծոյ սրդին ունի մի ապագայ, և ինչ պէս կարող է ունենալ կինդանի ուրախութիւնն և շշմարխուսէր, առանց նուխաւեսելու սոյն ապագայն։ Հրկիւն, որ բնակոն մարդոյ պիտոյ քներն ըլլուցանէր, առաւել եւս ըլլ գոհացնէր վերանորոգեալ մարդոյ պիտոյ քներն։ Բայց ո՞րն է արդէօք մարդոյ ապագայն։

Յալշաննես աւտքեալն կ'առէ։ և Գիտեմք, զի յորժամնաս յայտնես ցից նման նման լինելոց եմք։ զի տեսանելոց եմք զնոս, որպէս և էն ո։ Վհաճար ապագայն — Լինիչ նման Վստուծոյ։ Վհաճ սոյն ապագայի ժամանակն ու թուականն — Յորժամ նայալ նեցի։ Վհաճ սոյն ապագայի գըրաւականն — Տեսանելոց եմք զնա, որպէս և. էն։ Չը բաժանեմք ուրեմն սոյն գաղափարներն իրարմէ։

Պանալ նմանիլ Վստուծոյ, վերրատին հաստատել ՚ի մեզ նորա պատկերն, ահա ըսվանդակ առարկոյ եւ նպատակ Վւետարանի, ահա գործ փրկութեան, և սոյն գործն կ'ըսկոի նոյն վայրկենէն, երբ Վստուծոյ որդի տիտղոսն կը տրուի մեզ։ Վստուծոյ որդին կը նմանի Վստուծոյ, և կը նրանի ապագայի համար նշանակուած սպայմանաւ, այն է տեսանել զնա որպէս և. էն։ Վյա ամենակարեւոր միջոցն գործ գրուած է նոր արարածի վերածնելութեան համար։ Վստուծած զինքն յայտնեց մարդկան, որպէս եւ էն, և յայտնեց այնպէս գէմ յանդիմոն, այնպէս լրիւ և կատարեալ, որ այս մատին կարող չեմք

ասել բնաւ, թէ յայտնելու նոր բան մնացած է ապագայի համար։

Խօսքս այն յայտնութեան վերացչ, որ յայտնուած է Վստուծած արարածործութեամբ և հեթանոսներն անդամ գիտեն։ և Գիտութիւնն Վստուծոյ յայտնի է ՚ի նոտա, այսինքն ՚ի հեթանոսս ։ Քանզի Վստուծած իսկ յայտնեաց նոցա։ Օյ աներեւոյթը նորա ՚ի սկզբանէ աշխարհի արարածութեալ տեսանին, այսինքն է մշտնջենուորութիւն և զարութիւն և աստուածութիւն նորայութամ։ Ա. 19-20։ թէպէտ և աներելի են հեթանոսներն, որ ըլլ ճանաչեցին զի ստուծած իւր արարչութեածործերով։ սակայն կարող եմք ասել միանդամայն, որ նոցա մեզաւոր վիճակն կը խաւարեցնէր նոցա համար արարչութեան պարզ հայելին, որով և անընդունակ կը լինէին, ինչպէս որ կը լինիմք նոտեւ մեր, գտնել և տեսնել զի ստուծած իւր գործոց մէջ այնպէս, ինչպէս որ է, և որ մեր գըրնուած վիճակին նոյելով տիեզերքն, բոլոր իւր հրաշալիքներով կարող չերախնդակապէս յայտնել և ցուցանել մեզ զի ստուծած։ Ուրեմն մեզ համար անեներէլին նէ թէ ըլլ տեսնելին է, այլ մեր անձն այնպիսի վիճակի մէջ դնելն, որով անհնարին է տեսնել։ Բայց զիարդ և իցէ, Վստուծած իւր արարչութեան գործերով զինքն ըլլ յայտնիքը մեզաւոր մարդոցն այնպէս, ինչպէս որ է, և ինչպէս որ կամի լինել նորա համար։ Վստուծած կ'երեւի որպէս պահպանող մեր երկրաւոր գոյութեան, բայց անդրքան զի բարին և զնախախնամողն իսյ տակաւունքն քող մի, վարագոյր մի, որ կը քողոզէ մեզմէն նորա միւս կատարելութիւնքն, ի՞նչ կայ արդեօք ՚ի յատւատ վարագուրին, գատաւած թէ

հայր : Ո՞ւր ներքին կարօտութիւն մի ունիմք այս բանն իմանալու , և բնութիւնն ըստ պատմեր մեզ զայն ,

Խօսքս այն յայտնութեան վերաց չէ նմանապէս , թէ յայտնուած է Աստուած Ո՞վլիսի ժողովրդին այնպէս , ինչպէս որ է : Եթէ ասեմք , որ Աստուած այնպէս է , ինչպէս որ կը խօսի կայծականց ու ամաց մէջն եւ վերան բարձրութեանէն , ուր ամենայն ինչ այնպիսի սոսկալի երեւայթ ունէր , որ Ո՞վլիսի խոկ կ'աղջողակէր . «Օ առ հուրեալեմ և գողամո . եթէ ասեմք , որ այնպէս է Աստուած , անհնար է ըմբռնել թէ ինչպէս կարող է սոյն Վրտուծոյ տեսութիւնն առ ինքն տանել որդիներն , և ինչպէս կարելի է նըմանի նմա , և կամ ինչպէս կարելի է որ այսու նմանութեամբ կատարուի մեր վերածնելութիւնն : Վնաշուա արդարութիւնն արժան է Աստուծոյ և մեզ ներուած չէ բնու ենթադրութեամբ փախ տալ նմա այնպիսի մի կատարելութիւն , որով անարդուի նորա արդարութիւնն : Իսոյ ինչպէս կարող է յարմարիլ մեջ սոյն օրինակ մէ արդարութիւնն . ինչպէս կարող է սոյն արդարութիւնն մէն միայնակ լոցուցանել մեր փախճանն , եթէ ըստ կըսենք գործադրելզայն առ մեջ Իսոյ եթէ լոիւ գործադրուի սոյն սոսկալի արդարութիւնն , իսպառ կ'ոչնչոցնէ զմեզ :

Ուրեմն , եղբարք իմ , խօսքս ոչ այն յայտնութեան վերաց է , որ յայտնեցաւ Աստուած արտրշագործութի , և ոչ այն յայտնութեան վերաց , որով յայտնեցաւ Ո՞վլիսին , այլ այն յայտնութեան վերաց , որ յայտնեցաւ Աստուծ Յիսուսիւ , և յայտնեցաւ այնպէս , ինչպէս որ է : Այնպէս , ինչպէս որ է , այսինքն նու է ԱՆԱՀԱՅ ԴԱՅԱԽՈՐ և ԱՐԱՐՄԱՆ ՓՐԻՒԶ : Ոչ

միայն այնպէս , ինչպէս որ է , այլ եւ այնպէս , ինչպէս որ պարտի ներկայանու մեզ իրրեւ օրինակ : Վասն զի Բնէ օգուտու կը լինի մեզ ու ասանի նորա արդարութիւնն , եթէ չուսանիմք նորա սէրն : Այնպէս , ինչպէս որ պարտ էր լինիլ , օրովէս զի կարող լինէնք տեսնել զինքն և առ անելով զմայիլ : Վասն զի , եթէ ըստ մարդանար , կարսզ էինք արդեօք աեսնել զիա ՚ի մատուատ , Վասուծոյ օրինակներն պատշաճութիւնն մորդկային վիճակին զմեզ համոզիլանէրել փաստիւ , որ կատարելագործութիւնն մեր նպատակն է , և թէ մեր բնութիւնն և թէ մեր վիճակն կ'ամփափեն իրենց մէջ ամենայն արքեբբ և պայմանիք սուրբ կենոց : Այլ համարձակիմ ասել , որ մէք տեսանք զիստուած , ինչպէս պիտի ինէր , ինչ որ պիտի առներ , եթէ մարդ լինէր Աստուած : Այսպէս է գալաքիթն , այսպէս է արդիւնաւոր շնորհքն խորհրդաւոր մարդեղութեան Տեսուն մերց Յիսուսի Քրիստոսի :

«Աման նմա լինելոց եմք . զի աւստելոց եմք զիա , որպէս և էնո : Եթէ ասեմք , որ միայն պարզ տեսութիւնն կարող է զմեզ նման նմա առնել և հազարդել մեջ նորա յատկութիւնն ու բնութիւնն , առաջնն ակնարկութեամբ կը համարուի սոյն բուրութիւնն միատիքական գաղափար եւ ցնորք երեւակայութեան : Իսոյ հորկ է իմանալ , որ ընդդիմադիր նախատաշարումն յառաջ կը գայ միայն խորին տգիսութենէ , այսինքն մարդկային բնութեան օրէնքներն և ճշմարտութեան հզօր զօրութիւնը ըստ Ճանաչելն : Այս նկատմամբ եթէ սակաւ ինչ խորհրդածեմք , Առաքելցն ակնարկած խմսատին կը մօտենամք : Ամ փոփեցէր ձեր աշաց առջեւ այն ամեն գծերն կամ յատկանիներն , զորս յա-

ջորդաբար ներկայացն ցինք ձեզ : Ապատկերացուցելը ձեր տունեւ կատարեալ սրբութիւննեւ , որ առաջին անգամ երեւեցաւ . մարդկութեան , նայն խոկ մարդկութեան կերպորանուու , սրբութիւնն , պատշաճաւորի կենաց ամեն գլխաւոր յարաբերութեանց , սրբութիւնն , որ կը մերժէ ինչ որ սոսկումն կը պատճառէ , կը մասակարաբէ ինչ որ աէրն կը պահանջէ . պատկերացուցելը ձեզ սրբութիւնն երջանկութեան գծերավ եւ տեսքով , որ կը ջնջէ , իրբեւ ցնորք , բարերասատութեան միւս բազրերեւ ոյնիներին և ըներին միայն կը վախանակէնուց ու աեղ անոււամբ գերսպայն և ճշմարիս երջանկութեան : Վ. յն հոգին , որ հաւասարապէս կարօտութիւն կը դասու սրբութեան և երջանկութեան , երբ տեսնէ երկոքեան սցովէս միացած , ինչ կը կարծէք դռւք , միթէ անօգուտ կը մնի նորա համար սոյն միացեալ պատկերի տեսութիւնն , և մի թէ չը փափագիր իրեն սեպհականել սոյն կրկնակի գանձն : Սրբութիւնըն , երբ կազմակառած է ամեն զարհութեցուցիչ գծերէ , և զարդարուած է ամեն վատահեցուցիչ զարդերով , երբ կը պատկերանայ գեղեցիկ՝ իւր յատուկ գեղեցիկութեամբ և գեղեցիկ՝ իւր խոստումներով , սրբութիւնն , եղբարք , անշուշտ պէտք է ունենայ իւր հզօր հրապուրանքն , և կամ , աւելի լաւ է ասել պէտք է գանէ և գործադրէ այն ամենայն , որով առաջին անգամ զարդարեցաւ ՚ի զարդ ըսւեցին Հոգին , որ ՚ի սրբութիւն կոչուած է , պէտք է որ սրբութիւնն միայն ճանաչէ ծշմարիտ բարիք , միակ առարկայ և միակ գերագոյն վախճան : Հոգին պարտի սրբութեան հետ միանալ սիրով , ինչպէս աչքն լուսոց հետ , ինչ պէս բովանդակ մարդն՝ կենաց հետ :

Հոգին պարտի ոչ միայն նկատել եւ տեսնել սրբութիւնն , այլ և բառ չու փունկութիւնն նուե իւրացուցանել , նովաւ թափանցիլ և իւր յառաւկ էութեան տեղ փօփանակել սոյն աստուածային էութիւնն , սոյն աստուածեղէն սրբութիւնն : Որբութեան աեստութիւնն միայն բաւականէ հոգւ համար , վասն զի միացումն արգէն առաջուց կայ գիտաւորութեան մէջ . կամքն արդէն սուրբ է , նա այնպէս կը ձգաի և կը փափագի սրբութեան , ինչպէս կարծքն կը փափագի օգոյ և և տուրեւառութեան շնչց : Պէտք է է հոգւցն ճանաչել միայն ինչ որ կը սիրէ և ահման ոյս է պատճառն , որ միայն տեսութեամբ նոր կերպարանք կ'առնաւ , կը նորոգի և կը վերափափին : Պամն զի , նայիլ կը նշանակէ սատնալ , իսկ տեսունել կը նշանակէ կեալ , ասպիլ :

Երդ՝ որովհետեւ ճշմարիտ է թէ . « Որ ետենն զՅիսուս ետես զՃայրին : Յովի . Ժ. 9 . Ճշմարիտ է նոյնապէս թէ . « Վանայն որ տեսունիցէ զԱրդի է հաւատապայէ ՚ի նա , ընկալցի զիեսնե սըն յաւիտենականս ո . Յովի . Զ . 40 . այսինքն լիցի նման Վատուծոյ , որ է ունենալ կեանք և կեանք յաւ իտենական : Յիսուս սիւ տեսանել զՄատուած և հաւատատալ , այս տեսութիւնն է ահա որ կը վերանորոգէ երկրիս վերայ Վատուծոյ որդուց շլջեաւ ցեղն ու սերունդն է Շայց , եթէ Վատուած երեւեցաւ Յիսուսիւ Վրիստոսիւ այն պէս որպէս և է , ինչ կը մնայ ու բեմն ապագայի համար , ինչ է , զոր կը պահպանէ մեղ համար հանգերձն ալ աշխարհն և ինչ կը նշանակեն առաքելցն սոյն խօսքերն . « Յորմամ նա յայն նեացի , նման նմա լինելց եմք , զի տեսանելց եմք զնա՝ որպէս և էն » : Վիթէ յայտնուած չէ նա արդէն ,

և միթէ կարտլացած չեմք տեսնել ըդ-
նա , որպէս և է :

Եղբարք իմ՝ առարկան չէր ուրե-
մբն , որ կը պահեէր , այլ տեսութիւ-
նըն : Հիւանդաս կամ մշտչապատ
աչքն պիսի չը կարողանար լու տես-
նել : Գոհութիւն Շատուծոյ , այն
աչքն կարտլացած տեսնել և իւր տե-
սութեամբ հաջորդել հոգւոյն մի ան-
պատում ուրախութիւն և անմահ
տարերք նոր կինոց : Եաց ո՞չովի
խոշնդաներ եւ ո՞չափ առարկայք
կան մեր տեսութեան և իւր առար-
կային մէջ , և ո՞րքան առիթներ կան ,
որք կը միանան , որ արգելուն զմեզ
անսնել միանդամոյն , շարունակ եւ
ոյոշակի զիմառու համանդամայն , այ-
սինքն զլատուած բովսնդակ : Այսան
առիթներ կան , որք կը միանան եւ
կ'արգելուն զմեզ լիովին նմանիլ նմա ,
վասն զի ձշմարիտ նմանութիւնն կա-
խումն ունի կատարեալ տեսութիւնէ :

Այս , աստուածային գթութիւնն
այնպէս տնօրինեց , որ Աստուծոյ որ-
դին կարող լինի վայելել իւր Հօր տե-
սութիւնն ամենայն լրութեամբ , և
թողեց միայն մի բան , այն է թողեց
շմարդն կապեալ մարմայ կապերով և
կենաց հոգսերով : Տեսանել զլատուած
յամենայն ժամ , առանց ցնորման ,
առանց ամսոց մմտպենութեան , տե-
սանել տեւական լինէլ տեսութեամբ ,
երբէք տրուած չէ Աստուծոյ որդւոյն
երկրիս վերոյ այն բաժինն շնորհաց :
Այն մորդիկն իսկ , որ մոռնալով իւ-
րեանց մահկանացու վիճակն , կամե-
ցած են մոռք թափանցել ՚ի յետին
խորս խորութեանցն Աստուծոյ , նորա
ամենէն աւելի լաւ ցուցած են՝ թէ
ո՞չափ սահմանափակ է մեր կարողու-
թիւնն : Կոցա խորհրդական յափրշ-
տակութիւնքն այնքան չեն օգնած նո-
ցու , ինչպէս և չօգնէր խնարդ հա-

ւատացելցն իւր խնարդ տեսութիւ-
նըն ու նայութածքն : Պօղս առաքեա-
լին խիստ լու բացատրած է այն կե-
տըն ասելով . Այս մէ կը տեսնեմք
շփոթ և իրեւ հայելոց միջոցաւ ու ե-
թէ կը ճանաչեմք միայն . Ամսն առ-
մասն ու Շովանդակ տեսութիւնն , շա-
րութակ տեսութիւնն զայցուած է
մեզ . և կորի իրաւամբ , զլատուած
և զաստուածայինն տեսնելու համար՝
ևս արգէն առացի , որ երկու խազն-
գուններ մեր և Աստուծոյ մէջ կը մըտ-
նեն , և , այսպէս ասենք , կ'արգելուն
կը խարտակին մեր տեսութիւնն : Այ-
սրկու խոշնդուներն են — մարմինն
եւ կեանքն :

Մարմինն , այսինքն այն ամենայն
ինչ որ կայ մարդոյ մէջ և ինչ որ կը
մնայ նոյն խոկ Աստուծոյ որդւոյ մէջ ,
ինչպիսի են զուտ մարդկոյին յօժարու-
թիւնքն և մանաւանդ այնպիսիքն ,
որք կը վերաբերին հակատամիտու-
թեանց ՚ի մեղա : Եղբ սցն տարերքն
կը բարձւանան մեր աշաց առջեւ իր-
մեւ գործք անմաքուր , խկոյն կրգա-
դարիմք մեր զլատուած տեսնելէ : Աս-
տուծոյ պատկերն կը նուազի , կը տր-
կարսնայ , կը շփոթի , կը ջնջուի , կ'ան-
հետի մեր առջեւէն : Վեր կը տես-
նեմք զայն միայն հորիզոնի վերայ ան-
կերպարան , տիսուր և թերեւս ըս-
տառնալից , կողապատուած ամեն գե-
ղեցկութիւնէ , որ զմեզ կը հրապու-
րէր զերեքն սիրելու , կողովտուած ա-
մեն գործվանքէ , որ զմել կը միացը-
նէր և տակաւ առ տակաւ զմեզ կը
համակերպէր նորա հետ : Կարող եմք
նաեւ ասել , որ սոյն թանձր գործքն-
ներու յարատեւ ազգեցութեամբ ,
աստուածային պատկերն , շատ կամ
սակաւ , կը փոփոխի , կ'աղայի և եր-
բէք չ'երեւէիր մեզ իւր կատարեալ
յատակութեամբ : Այնպէս որ կամ

մեր աշխարհային երեւակացութեան Վասուծմէն և կամ հին օրինուց Վատուծմէն միշտ շփամ պատկեր մի կը գոյանայ և կ'այլակերպէ , կ'այլափոխէ Վաետարանաւ յայտնուած եւ քարազուած ծշմարդս Վասուծոյ իսկուկան և կաաարեւլ պատկերն :

(Եպո-Նովո-Բենու)

ՄԵՐ ԵԿՇղեցական երգեցողութիւնն , կամ , աւելի պարզ ասել , մեր քրիստոնէական աստուածապաշտութեան նուագաւոր աղօթքն ու վասուաբանութիւնն օր աւատք խռնդարուելու վերայ է : Այն աղէտավի աղաւուղութեան պատճառն մի կողմէն Աղքային եկեղեցական Վարչութեան ան հոգութիւնն է և միւս կողմէն , երաժշտական տղիսութեան հետ , կամահաճ ոմանց անձնապատասն յանդրդ նութիւնն , որք իւրեանց ձայնի , մերթ լալական և մերթ զօսական գեղգեղանքներուն ապաւինելով , քան թէ երաժշտական ուսման կանոնաց Եւ նախնական երգեցման եղանակին , կ'այլաղըն , կը քաշքչէն , կը խեղսմթիւրեն եւ կ'անչքայնեն մեր ժամակարդութեան պարզ ու վեմ երգերն , սրսախոս ու պրտագրաւ նուագներն և ընտիր ընականներն , ստեղիներն ու մեղեղիներն , որով եւ մեր աստուածապաշտութեան սրբափայքն տռաւել վայնասունի և զօսավայրի խոռնացիթ տեսարան կը դարձնեն , քան թէ առան աղօթից եւ տեղի մտախոհ եւ ջերմեռանքն երկրպագութեան : Կարի մեծ վիշտ է սոյն աղաւաղումն երկիւղած պատերու և Եկեղեցւոյ իրական փռաց նախանձախնդիր ոգի

ներօւ համար , բայց խմառ սակառ աթիւ և համարեամ թէ մատնանիշ առնելու չափ հազուագիւտ են այն անձինքն , որք գործնական կերպիւ կը չանան աւաշն առնաւլ սոյն վեսասակար խռոնացիութեան : Այս հազուագիւտ անձանց առաջննն կը համարուի իրաւամբք . Պ . Եղիս Տնտեսեան , որ զանազան հասուն յօդուածներով , բանի մի տարիներէ ՚ի վեր , սոյն խնդիրն ըսպրաց մէջ յուղելին զինի՝ սյաօր ևս իւր Եկեղեցներն Երգեցմունքն կը հըրատարակէ պատուական Մասիսի 1368 և 1359 թիւերուն մէջ , յօրմէ և մէք առնելով ուրախութեամբ կը հազորդիմք մեր ընթերցողաց , ցաւելով ընդունին , որ հեռաւորութեան ա : Թիւանկարող Ենք , իւր նոր աշխատասիրութիւնն , տպագրութենէն առաջ , տեմնել , գիտել և անկեղծարար մեր դիտորութիւննքն անձամբ իրեն հազարդել :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ

Մեր աղքային Եկեղեցական երգոց ներկայ անկերպարան վիճակին վրայ քանիցս անգամ հրապարակաւ խօսուած ըլլալով , ներկայ յօդուածիս նըսպատակին այս մասին մանրամասն տեղեկութիւններ հրատարակել չէ , այլ գործնական արդիւնք մը ներկայացնել ընթերցողաց , և անոր վրայ քանի մը տեղեկութիւնն հրատարակել :

Մեր Եկեղեցական երգոց ներկայ վիճակին մէջ , անոնց ձիշդ եղանակները գտնել և ՚ի գիր առնուլն որչափ անհնարութեան մօտ դժուարութիւն մ' է , սակայն բաղմօրեայ փորձերով ու հետախուղութեամբ հաւաքած մեր տեղեկութիւններն համարձակութիւն տուին մեզ՝ որ Շարժ-

կրտնի երդերը ամբողջ ձայնուգրելու ձեռնարկինքն (Ծ), որն որ ասկէ երկու տարի յառաջ (1870) տւարտեցինք . բայց հրատարակութիւնն այլ և ոչ պատճառներով յապարհացաւ ցարդ :

Նախ եւ յառաջ հարկ է որ այս ինդրոյա վրայ մեր արդէն հրատարա կած մէկ քանի հատուածներն իրշեցը նենք առա համառօսիւ, որպէս զի ընթերցաններէն անհնկ՝ որք այս նիւթիս վրայ որոշ դաշտի որ մ՝ առնելու կու զին՝ կարենան զանանք աչքէ անցնել եւ ըստ այնմ մեր ներկայ առաջորդու դատել : Նախ աթավանդակութիւննը բարեց Հայաստանեաց Ա. Եկեղեցւոյ անուն տեսոր մը Եւրապական ձայնա գրութեամբ : առար դէմ նաևնի մը Ժամանուկ Հանդէսի 35 թուոյն մէջ, և դարձեալ նոյն Հանդէսին 33 թուոյն մէջ սոյն տետրին պաշտպանութեամբ պատասխան մը վերցիշեալ նաևնին : Երկրորդ, Ժամանակ Հանդէսի 45 թու ոյն յաւելուածալ, « Յոր ականի եր գոյ իս սղերուն և նոց ո դարութեանը վրայ տեսութիւնն մը . նոյն Հանդէսի 46 թուոյն մէջ առար դէմ հատուած մը, եւ Մելու Հանդէսի 243 թուոյն մէջ պատասխան մը ՚ի պաշտպանութիւնն մեր աեսութեամբ Երրորդ, ՚իօն ամսաթերթին (1865) թիւ 6, 7, 8, 9, Աղդային երաժշտութիւն վերնագրալ հատուածներն :

Զառնիք յիշեցնելէ զինի, դարով մեր ձեռնարկութեամբ վրայ արուելիք տե-

(Ծ) Այս գրքին ուրիշներ ալ կարենէ և որ ձեռնարկած ըլլուն . բայց առանցմէ՛ Հանդոցեալ Պալեան կարապետ ամիսայի պաշտպանութեամբ եղանձը միայն ՚ի մասց հանօթ է մեզ, որ թէե մէծ զործ մ՝ է առեայն մէկ երգողի և մէկ ող ձայնա զրողի՝ սյօփէն միայն երկու անձի կարծիք է, եւ չունի այն քննական ոճը՝ որ անհրամեշտ է այսպի մի մեռնարկութեամբ մը համար, միանգամայն : Էնց ուրեմ կը նշմարուի . ձայնագրողը քիշ չառ յանդուզն փոքէր ըրած է մեր եղանակները տաճրական և դա նույզ վերաց որբադրելու :

զւկութեանց, հարկագրած ենք ըսել որ, կարծես ՚ի նպատա մեր զեռ շրտ տանք ոյնպիսի զրութիւն մը որ կա րազ լինէր հիմնապէս իրափոխէլ մեր կարծիքը, քան զրու հրատարակած է և ինք ցարդ . ուստի, ինչպէս ըսել, առանց մեր առաջնութիւն կազմէլ ը վախի ինէլ կարենապւ, միայն քանի մը ամփո վումներով ձեռնարկեցինք ոյն գործնին, զրու օրինակ, իս աղերու դրութիւն մը կար, ինչպէս Յարու մասան կարենալ ը վերջինք և Ա. Ա. Ա. Երգերու ընդհանուր օրէնքին յար մարցուցինք, որ ըստ ինքեան անհետ թիւթ դաշտուի մը տնէր, նոյնպէս և « Անձինք նուիրեալք ո երգը տաղերու գութեան ընդհանուր օրէնքին յար մարցնելով՝ ամեն առւն մի և նոյն եղան հակի վերածեցինք, և այսպիսի դէպ քերու մէջ միայն խաղերու կարգը վու խեցինք աւելի հաստատ ձեւի մը փախադրելու համար . իսկ այն տեսակ երգերն՝ որոյ ամեն հատուածին մէջ միօրինակութեամբ մը կար, նոյնը պահ հեցինք և յարգեցինք, ինչպէս կերեւ մի և մեր աեսութեանց մէջ, սոյն միօրինակութեամբ՝ երգերուն երկու հինգ երորդը պականեցան, այսինքն շատ մը երգեր գրեթէ ճիշդ մի և նոյն եղանա կի վերածվեցան, ինչպէս որ էին ալ իրօք, և տարբերութեաննին ալ միայն աղաւալութեանէ յառաջացած էին :

Ասկից ալ բացայատեցաւ՝ թէ և ըստ մասին խաղերու այն շարայրութիւնը, որով մի և նոյն խաղ՝ եթէ ոչ ամեն տեղ՝ գոնէ նմանօրինակ տեղեր մի և նոյն դրութեամբ կը գործածուի, ինչպէս կը տեսնուի Դ. Զ. Երգոց « Ա. Ա. աօր ՚ի կատարումն » , « Որ զորէնո որր»

բոլթեան և այլոց, և Ա. Կ. Երդոց
“Որ նախիմաց ո, “Արեգակն արդա-
րութեան և այլոց մէջ, որ սոյն օրի-
նակ Երդոց վրայ շատ շարակնոցներու-
մէջ Երկար, պարոյի և այլն խառն ՚ի
խռուն գրութեամբ կը գտնուեին:

Սցն ոճը ուրիշ գիւրութիւն մը
եւս տուաւ մէզ գորօննակ, մէք Եր-
դոց կարգերը Ա. Հ եղանակէն սկսելով
շարունակեցինք, ուստի շատ մը Եր-
դեր ինչպէս Ա. Հ եղանակէն “Ուրա-
խացիր Եկեղեցի ո, և Պայծառացիր ո
հարցերը և նմանները, ԱԿ եղանակէն
“Որ նախիմաց ո, “Խորհուրդն ան-
ձառ ո, “Արեգականն արդարութե՛,
Երդերը և նմանները, ԲԿ եղանակէն
“Որ պատուիրան ո, “Խմասուուն կու-
սանքն ո, “Փարսւոն հանդերձ կա-
ռօքն ո Երդերը և նմանները, և վեր-
ջապէս ամեն եղանակի Երդոց նմանո-
րինակները յաջորդաբար գրելով, մէ-
կըն զմիւոլ այնպէս գիւրացուց, որ
կարծես թէ ամենն ալ միւնայն Երդի
այլ և այլ հատուածներն են, ինչպէս
և իրօք ալ են, ասոնք ՚ի սկզբան մէկ
կամքանի մը Երդերու, վրայ փորձ մը
ընողը միւսներուն վրայ լիուի տեղե-
կութիւն մը կրնայ առնուլ:

Երդերու սկզբնաւորութեանց եւ
վերջաւորութեանց համար ալ միւնայն
կանանք պահեցինք ինչ որ ցուցած է-
նիք մեր Տեսութեանց մէջ. բայց սա
պէտք է ըսենք, որ նմաննաձայն Երդոց
մէջ առաջն նախադասութեանց կամ
տողերու վերջին մասերը պէտք է Ե-
րդարու յար և նման ըլլան, և ասոնց
մէջն վանկի կամ բառի աւելորդը
հատուածին և տողին սկիզբը կամ ըս-
կրպան մօտերը կը մնայ, զորօննակ.

ՈՐ ըղ նախագրեալն յառաջագոյն
.. . ՈՐ ՚ի լրումն անձառ ծննդեան

Նահապետացն Աքրահամնու-

• Աղախին և մոյր կենաց և այլն.

Արեւ արդր ծագման արաւակակդ առաւտառեալ
Բարձ անձ խորոց տեսնող խմասուիք հոգւոյն
Խորհ անհ ծածկեալն յազգոց և յա խռենից

Նորաստեղծեալ բանն յանեից

• ՈՒ Օ ՆԻ որդիք զարթիք

Ողբամած աէր ողորմեա.

՚ի յօթեւանս հօր քո լուսոյ.

Խնչպէս սոյն համառօտ օրինակնե-
րէն կ'երեւէն թէ արձակ և թէ չափա-
կան Երդերու մէջ վերջին մէկ կամ
Երկու բառերը և վանկերը իրարու կր
համեմատին, և աւելին ու պակա-
սը սկիզբը կը մնան :

Սցն բառերու և վանկերու համե-
մատութենէն խազերու դրութեան
քանի մը կէտերը ըստ բաւականին
լուսաբանեցան, զոր օրինակ .

՚ի տեղ՝ ՚ի տեղ՝ ՚ տեղ՝ , եւ
այլն :

Շարականի Երդոց նախադասու-
թեանց կամլաւ ևս տողերու ու հա-
տուածներու վերջաւորութեանց մէջ
ալ ուշադրութեան արժանի բան մը
կայ, այն է, Երկար վանկերէն յետոյ
մինչ ՚ի վերջ եղած պարզ վանկերուն
թիւը ընդհանրապէս կոճատ է, զոր
օրինակ :

Մէկ վանկ.

Ասենով: Խմասուիք հոգւոյն . Եւ
սուրբ կուսանքն, և այլն :

Երեք վանկ.

Հակից հօր և հոգւոյն . Աստուած
հարցն մերոց : Ը. թշնամին խորտա-
կեցիք, և այլն :

Հինգ վանկ.

Այսօր ծնաւ յամուլ յարդանդէ :
Այսօր ցնծան Երկնայինքն : զնոյին և
զԱքրահամուն : Բնվումն ՚ի հօրէ ըգ-
հոգին ձշմարիտ, և այլն :

Եօթն վաճկ.

Կնքի մատեանսու քառհանայիցն : Արդար ես և սուրբ է քո աէրութիւնը : Մեղայ ողորմեա ինձ ասալուած : և այն : Ինը , տասնումէ՛ և տասներէք վանկով ալ կը գանուին :

Այս օրինակներն ընդհանուր օրէնք են , մանաւանդ հնդավանդ վերջաւորութիւնը . զարտուղութիւնը այնշափ սակաւ և անսովոր է , որ կարելի է մինչեւ անդամ սխալ համարել . միայն ԴԱ երգերուն մէջ Ծնդ , Գ . աւուր օրհնութեան երկրորդ հատուածին և իրեն նման երեք երգոց մէջ քառավանք վերջաւորութիւնն մը կայ , որ այն ալ գարձեալ իւր մէջ երեք և հինգ վանկով վերջաւորութեան զարտուղութիւնն կը պարունակէ . սոյն քառավանք վերջաւորութիւնն է ՀՅ Նշաններով , ինչպէս , Մա՞րդասէր փրկիչ , և այն : Բայց հաւանական է կարծել , որ նոյն քառավանք վերջաւորութիւններն եւս հնդավանդ ըլլան : այսինքն երկար վանկերը երեք կամ հինգ ոտք աւելացնութիւն ունենան փոխանակ երկութիւն և ըրսի , և ասկէ աւելցած մէկ ոտքը միւս ըրս վանկին վրայ աւելնալով գարձեալ հնդավանդ վերջաւորութիւն ունենան , որով եւ իրենց մէջ եղած զարտուղութիւնն ալ անհետանալով ընդհանուր կանոնի համաձայնն . վտան զի ձեռագիր շարականաց մէջ սոյն վերնախաղէրուն վերայ երկու կէտեր նշանակուած են , որ տպագրեասներսաւն մէջ չկայ : Եռաշափ ու հնդաչափ ոտքերու վրայ տես ՚ի Տեսութիւն խաղաց շարտականաց , ժամանակ հանդէսի յաւելուած երես 155 : (Սոյն վերջի դիսորդութիւնը իրբ կարծիք միայն յառաջ կը բերենք հոս , վասն զի մենք մեր գրութեան մէջ ներկայ սովորութիւնը յարկած ենք ,

այսպիսի տեղեր քառավանդ վերջաւութիւնը պահելով) .

Աւելորդ է ըսել որ սոյն ձեռնորդութեանս մէջ ըստ կորելոյն խորշեցանք այն օտարութիւն և աւելորդ գեղեղանքներէն , զրոս շատերը սովոր են գործածել . իրարմէ տարբեր երգուածներուն յարմարագոյնն ընտրեցինք և Վերջապէս եթէ ներելի է ըսել , աշխատեցանք , և թերեւս մէջ մասսամբ յաջողեցանք ալ , ներկայ երգերու մասմին աւանդութիւն , տաղաչափութիւն երաժշտութիւն իրարու համաձայնենել որչափ որ կարելի էր , ովահելով միանգամայն սրբազն աւանդի մը պարտուպատշաճ եղած ամենայն ակնածութիւն և հաւատարմութիւն :

Մեր ձեռնարկութեան վրայ այս չափ տեղեկութիւն տաղէ վինիփ , գիտնալով այն դժուարութիւնը որ այս պիտի գործի մը պաշտօնապէս քննութեան և վաւերացման մասին կը գրունուի , ուստի այս դժուարութիւնը գոնէ մասսամբ իւիք բառնալոյ աղագաւ կը յայտարարենք ահա որ Կ . Պոլս ոս համար թուականէս սկսեալ մինչեւ երեք ամիս և հեռաւոր տեղերու համար մինչեւ վեց ամիս ժամանակ որոշած ենք , որոյ միջացն կը փափագինք և կը խնդրեմք որ սոյն նիւթին վրայ գիտալութիւն կամ կարծիք ունեցողը և կամ հետաքրքիր եղաղը բարեհաճի կիրակի և տօն օրերը ժամը վեցեն մինչեւ ութը , մեր քննակարանը այցելութիւն ընել , և կամ թղթակացիլ , յօրդագիւղ Նառ սօդաղը թիւն , և կամ ՚ի Պոլիս Յտուն Գաբու Ճառակէսի թիւ 465 (այցելութիւնները գոնէ օր մը յառաջ իմաց տալու պայմանաւ), որով մէնք ալ կարող պիտի ըլլամբ սոյն նիւթին հմուտ ազգայնոց կարծիքները կարելի եղածին շափ ՚ի մի ամփոփէլ , և սոյն պայմանաժամ

մէն յետոյ թերեւս մէկ քանիփ մասեւրը ՚ի լցո ածել ձայնագրութեամբ : Վասահ ենք որ ամեն անոնք որբ այս պիտի ձեռնարկութեան մը յաջողութեանը կը փափագին, պիտի փութան ընդունիլ մեր հրաւերը, և պիտի քաջալերեն զմեզ դիմագրաւել այն արդելքներուն որբ անբաժան են յայս տեսակ ձեռնարկութեանց :

Եթէ հնար ըլլար՝ այժմէն խսկ հրասարակութեամբ կը ցուցնենք մէկ քնի խնդիրներ և անոնց վրայ կարծիք կը հարցընէնք . բայց ձայնագրութեամբ և խաղերով ըլլալիք գործ մը մասնաւսք հրասարակմամբ բոցայստ ցուցնելու համար մէծ դժուարութիւններ գտնուելուն, այն յայտաբորութիւնը յարմար թուեցաւ մեզ : Բայց եթէ պէտք ըլլայ, և կամ հրապարակաւ պահանջում մը ըլլայ, մեր այս անգամ տուած տեղեկութեանց վրայ քանի մը տեղեկութիւն եւս կը յաւելլըններ հրասարակութեամբ :

S. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՑ ԵՒ ՍԽԱԼԱՑՈՅՑ ԻՒՐ

Մեծիմաստ և պատկուելի Տ. Երեմիա քահանայի մեծաքիրոն սխալացուցի մասին մեր կողմսնէ կանխաւնորհակալութիւն կը յայտնեմք, մասնաւորապէս մեր օրացուցի մասին : Այս մասին չենք կարծիր, որ նա ըշմեզ իրք սուպո ապերախտ նկատէ : Ինչու որ անկերեւ կը տեմնուի, մեք նորացանիսի աշխատութիւնն յարգելու զննքը կը պատուենք . բայց նա կը կարծէ թէ մեր արաբով իրեն շահու ազրիւրները կը խցենք, եւ իւր ներհուն հմտութեան առաջ կը կա-

մակորիմք : Յայց նա դարձեալ ՚ի սէր Ազգին և ՚ի սէր իւր կրօնին և ՚ի ջատագովութիւն եկեղեցւոյ իւր ծանր և հասուն հասակիմք ըլլ խնայելով աշխատութիւն յանձն կ'առնու և աւելլ լաւ աշխուժով մեր օրացուցի սը խալները կը մանրախուղել, աւելին կը յապաւէ, պակասը կ'աւելցնէ, թէ որ ըլլ գտնէ կարկտան կը փակցնէ . որպէս զի զմեղ լաւ հրահանգէ : Զարմանալին առաքինութիւն և դիւցագնական կործ : Ի հարկէ պատճառ մը ունի . զի առանց առթի ոչ ոք այսքան կ'առաքինանայ . և նոյն խսկ պատճառըն մեր սոյն խօսքերու մէջ կը նշմարուի :

Իրեն կարծիքն է, ով կարէ զինքը բռնաբարել թէ մեք իրեն բարձր հանձարայ թերակատար աշակերտն ենք, դժբաղդաբար կը խոստովանիմք թէ չեմք : Սոյն յետագայ պատմութիւնը կը ձշմարտէ ըսածնիս . ցուցամոլութիւնն մեզ համար չէ, բայց և անձնափրութիւննիս ըներէր իրեն աշուկերու համարուիլ, որքան ալ թերատինի մէր գիտոցածն . ուստի սկիզբն ընենք խօսքերնուև՝ ուրիշ արժան է : Երբ սուրբ Աթոռոցս նորընտիր Եսայի Սրբազն Պատրիարքը եպիսկոպոսանալու և Ազգին հետ աեսակցելու պատճառաւ ՚ի Պոլիս և ՚ի Ս. Էջմիածին գնաց, նոյն միջոցները Տէր Երեմիա Հօր հետ կը տեսնուի ու կըսակարկեն որ զինի հանելուկական ուսման եղանակը նոյն սրբաղան Հօր ճանաչած ուշիմ բարեկամին, այն է Զէնձիրձեան Յալութիւնին, որ արդ էֆէնտի է, սորվեցնէ : Այս պայմանաւ որ կատարեալ աւանդէ, որ նա ալ սուրբ Երուսաղէմ դառնալով հոն օրացոց հրատարակէ : Նոյն Տէր Հայրն ուկւց ձայն լալով յօմարութիւն կը յայտնէր . խոկ իւր ներսի դաշտականացնեան և

ուխտին նայելով՝ փախուսախ ճանապարհ կ'որոնէր առանց որսը ձեռքէ հանելու . բարեբաղդ էր մեր Տէր Հայրը . զի իւր աշակերտն եւս լոկ ու կին ըրած էր իրեն նպատակ և ոչ թէ սրբազն Պատրիարքի ցանկացած ուռ մունքը . Երբ այսպէս գեղեցիկ դէպք քով Տէր Հայրը դրամը շահեցաւ , ուխտն ալ չը դրժեց , ու իրեն աշակերտը բան մը ջըստացաւ , իբր ուռ եալ սուրբ Աթոռն՝ իւր եկամտի ակն դիմեց . Բնականաբար Արքազանն եւ Միաբանութիւնն պահանջեցին Օրացցց տպել . նա ալ ամենայն յօժարութեամբ տուաւ . զի Տէր Հայրն օրի նակ տուած էր և հետ զիետէ պիտի ուղարկէր , եթէ Երուսաղէմ իրեն բաւելու շափ օրացոյց միայն տպէր . և առ նուազն օրացուցի գնոյն շափ իւրէն լիշտանիր ուղարկէր . Այս յուսով երկու տարի գաղտ իր աշակերտին նոյն տարիներու օրացուցի կնճռու տեղերու լուծմունքը ուղարկեց . բայց երբ տեսաւ Երուսաղէմի օրացցցը իւրեն յայտնի շահուն կը վնասէր եւ գաղտնին ալ չէր գտներ , աշակերտին պարզապէս ծանոց թէ՝ ոչ ինչ գրելիք չունիմ քեզ . և իրեն արժանաւոր աշակերտը որ լոկ շահու համար կը պատրուակէր առանց ապագային վը բայց խորհելու գլուխն բաց հրասդարակ մնաց , բայց չը շուարեցաւ ելք գլուխնին , զի այն որ խաբելու վարժ է , տոելն բան մը ըսելչէ իրեն քով . տըւած շըալ խոստմնագրերը կարծել կուտային , թէ բովանդակ ուսմունքը քիչ ատենէն վեր առած էր Տ . Երեմիա Հօրէն . ինչպէս որ Տ . Հայրն ալ հաւան էր անոր չը գիտցած գիտութեան . երբ տեսաւ որ ալ ճար չը կայ կամ օրացոյց գրելու էր , կամ խոստովանելու էր թէ չը գիտէ , եթէ խոստովանէր չտիտել , Տ . Հօր յանձ-

նած ուսման ցուցակը կը վկացէր թէ գիտէ , իսկ եթէ ըսեր գիտեմ , շնեւ լու ստիպուած էր որ չը գիտէր . Ճարապիկ գտնուեցաւ մէկ փոքրիկ սուտով իր օձիքն և Տ . Երեմիայի գիտութիւն նդն աղատեց անփտանկ , այսքան բան ըսելով , առեսրակս այրեցաւ . լակոնական կարճ խոպք , որով թէ ինքը և թէ Տ . Հայրը գոհ եղան . առածը առին , բան մը չը տուին :

Տէր Երեմիա Հայրը կը հաւատաց թէ այս գէպքը պատահած է և յատուկ իւր աղօթից սատարութիւն ըմբռունած է և երկնից արդար վլէմիսնդրութիւն . դիցուք թէ նախապաշարումնիս զմեզ պահ մը յաղթահարէր , հաւատայինք այս սուտ իրողութեան և աւելի սրչարուէինք թէ հրաշնք եղած է այդ տեսրակաց հրդէ հը ինչ պէս որ կը հաւատաց Տ . Հայրը . այլ մեք թէ զինքը և թէ բոլոր ուշադիր ընթերցողքը ձշմարտութեան վերահաս ընելու համար կրաքար թէ տեսրակ մետրակ սցրած չէ . պատասխանատուութէ խուսափելու համար պարզապէս ստած է , ինչպէս որ չուսած ատենց՝ ուսած ձեւանալով . Թէ և Տ . Հայրը իւր աշակերտը և աշակերտը զգէր Հայրն ըսելեայն քաջ կը ճանաչէն . ինչպէս ըսինք , դիցուք թէ այրեցաւ . այն ինչ տեսակ ուսմունք էր , որ անդէն ընդ տեսրակին կորաւ . մի գուցէ սառի վըաց գրուածի պէս էլ որ արեւու շողերէն հալելով անհետացաւ . եթէ այսպէս դիւրակորըն չելիք . ապա և անպատիւ . Ահա Տէր Երեմիա հօր ուսուցած ուսման տեսողութիւնը այսքան եղած է սուրբ Աթոռոց մէջ . որոյ վասն կը խնդրեմք իրմէն որ զինի այսորիկ զմեզ իւր ցան կալի ուսման աշակերտ չը կարծէ .

Այս կը խոստովանիմք թէ մեր օրացոյցն ոչ խոպառ ՚ի վրիդակաց և ՚ի

թերութեանց աղասի է . որով մեր Տ . Հայրն գոհ ըլմնիդ . այսու ամենայնին կը խօսաւանամք աւելի ըստ և աւելի կատարեալ ընելու չափ ջանալ . զի երբ ներհուն գիտունին դիմեցինք՝ ծած . կեց , մեր ջանքավան ըրբնք թէ որ խզնի սլաք ունի , նա ալ իր վկայէ , որ եթէ իրենին հետ հաւասար չէ , գեթ պակաս ալ չէ . թէ որ ուրիշ մը ենիէ իւր անցեալ յօրի ուածները սիսալացուցի տակ զնէ , ոչ թէ ձնադիկան թեւի պէս քանի մը երես բան կենիչ շատ մը կրկնումներով հանդերձ , այլ դուցէ իւր օրացուցական մատենի կը ըկին ստուարութեամք . Քանի որ թերութիւն ունիմք ու սիսալներ սպլրդած են մէջ , ոչ ինչ իրաւունքը չունիմք խօսելու , բայց և իր ըրած բնական ծիրառվ չափազանցութիւնը չեմք կարող տանել . նա՝ ինչպէս որ ընթերցողոց յայտնի է , ջանացած է մանր խուզարկութեամք ինքնեն և չըսկէտքն ու աւելրդն անդամ իրեւ կարի պիտանի յառաջ բերել . թէ եւ մեր քով եւս յանցանք կայ որ անոր կուտակած խել մը անշահ և անպէտ բաները չենք իսպտու . հաներ , օրինակի համար՝ Նրէից ծոմերը , Յունաց մեռելոց եւ արտաքոյ կարգի սուրբերը , նոյնպէս և Լատինացւոց . Արդեօք Նրէից ծոմը մեզի ինչպէտք ունի . Յունաց այս ինչ սուրբի տօնը . Լու . Տօն սրբին Յիսուսի , Եթանամներորդ կիւր բակէն , և այն , և այն , ասոնք գերահանձար ուղեղի հաւաքումն են և ոչ թէ մեզապէս թերակատար գործասիրի գործ .

Իւր անհրաւէր դիտողութեանց , ըստ իւր բանի սիսալացուցի սիսալներու մասին արդէն շնորհակալութիւնիս յայտնեցինք . արդ կը մնայ աւելրդու դիտողութիւնները մերժել , եթէ կը մնայ սիսալ , ինքն ալ թողարկութիւնին դիմութիւն ունիք ալ :

1873 Յունվար մէկի դէմ ըստ իւր կարծեաց մեծ ու աւելի մեծ եկեղեցական սիսալ կը գտնէ . նոր կիւրակէն հարցն եւ , Փարաւոն հանդերձ անշանակել նուս համար , որուն արդէն պատառախանած է Մէծ . Մարտքէ Ա . Յովսէ միթեան , մեք կ'աւելցնեմք ըստելով՝ սուրբ Ամոռս , Պղաց բողոք եկեղեցիք ու Հոյսաստան բովանդակ մեր գրածին պէս կ'երգեն ժամերգութիւնն և հանդիսաւոր պատարագ կը նեն . (Եթէ ապաշխարանաց օր է , պէտք է Տ . Հօր ըստածին հետեւին) : Թէ որ այդքան բազմութիւնն ճիշդ մեր գրածին պէս կը կատարեն , ուրեմն Տ . Հօր սիսալը , և ամենամեծ սիսալն իրեն կը դարձնենք :

Յունվար 2 . Խնքը մէզի վարժապետ ընդունելու անձնասիր ւթիւննիս ըլներեր , արդէն ըստնք , ու նորէն կը սենք իրեն նկատած սիսալները լոկ պակասութիւն է , և ոչ թէ սիսալ . թէ ու պակասու սիսալ կը թարգմանէ Տ . Հայրը , անոր ըստելիք չունինք , իսկ թէ որ պարզուաէս սիսալ կը կարծէ , ասոր ոչ ոք կը դիմադրէ :

Յունվար 3 . Ըստ վերնցն պէտք էր որ պակաս է ըսէր և ոչ թէ սիսալ . զի մեծ պակասութիւն է իրեն հանձարցն պակաս բառի տեղ սիսալ բառն գործածել :

Յունվար 7 . Լու . Տօն անուան Յիսուսի (Ս) Տ . Հայր սիսալ է դրեր ըստ իւր ոճաց , այլ ըստ մեզ աւելրդու . իսկ գալուլ այդ պակասին , կը սենք իրեն թէ բնագրի մէջ կայ , շարուելու ատեն պակաս է մնացեր .

Յունվար 14 . Երեք եկեղեցական սիսալներէն երկուքն իրեն կ'առատաձեռնենք մէկն ալ խոնարհ կերպով կը խօսաւունիմք թէ պակաս է և ոչ թէ սիսալ , այն է յարաթեան համբարձին դրած չենք . իսկ երկուքին վրայ կարծ

